ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Ռաֆիկ Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով» վերտառությամբ ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է անջատողականության հայեցակարգային նոր մոտեցումների առաջքաշմամբ և արդի քաղաքական գործընթացների համատեքստում անջատողականության հիմնախնդիրների ուսումնասիրմամբ: Ատենախոսական աշխատանքի հիմքում ընկած են անջատողականության երևույթի համակողմանի ուսումնասիրությունը, Իսպանիայի քաղաքական համակարգում Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունների բացահայտումը, Կատալոնիայի անջատողականության ակտիվացման և ԵՄ-ի ինտեգրացիոն գործընթացների փոխազդեցության վերլուծությունը:

Ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև մեզ համար չափազանց մեծ կարևորություն ունեցող Արցախի ինքնորոշման իրավաքաղաքական որոշ իրողությունների մեկնաբանման առումով, քանի որ անջատման իրավունքը համարվում է ինքնորոշման իրավունքի տարրերից մեկը: Ադրբեջանի քաղաքականությունը մշտապես հիմնվել է Արցախի ինքնորոշման իրավունքի խեղաթյուրման վրա, այն ներկայացվել որպես անջատողականության դրսևորում, իսկ Արցախի ժողովուրդն էլ որպես անջատողականներ՝ հաշվի չառնելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այս համատեքստում չափազանց կարևոր են այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ուսումնասիրությունները, որոնք

կօգնեն առավել օբյեկտիվ վերլուծել Ացախի ժողովրդի իրավացի պահանջը, որով էլ կարող ենք պայմանավորել ընտրված թեմայի կարևորությունը:

Ատենախոսության նպատակը, դրան համապատասխան սահմանված խնդիրները և վերջիններիս իրականացման նպատակով կիրառված մեթոդներն ու գործիքակազմը ներդաշնակ են ու համակարգված: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս բացահայտել և տարբեր տեսանկյուններից ուղենշել անջատողականության հիմնախնդիրները, դերն ու նշանակությունը՝ այն դիտարկելով որպես տարբեր իրավաքաղաքական գործընթացների հետևանք:

Անջատողականության հիմնախնդրի համակողմանի վերլուծության նպատակով ատենախոսը աշխատության **առաջին՝ «Անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությունը և անջատման գործընթացի առանձնահատկությունները» գլխում** հանգամանորեն ներկայացրել է անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությունը, անջատման քաղաքական և իրավական մեկնաբանությունների առանձնահատկությունները, ինչպես նաև ԵՄ-ի անդամ-պետություններում գործող անջատողական շարժումների տեսակները: Ուշագրավ է, որ ատենախոսը վերլուծելով անջատողականության հասկացութային ապարատը և երևույթի պատմական էվոլուցիան, նշում է, որ «անջատողականություն» հասկացության բառարանային գործող սահմանումները ամբողջությամբ չեն արտահայտում երևույթի ողջ էությունը: Հետազոտությունում անջատողականության էությունը քննարկվում է քաղաքական գործընթացների և քաղաքական ինստիտուտների կայուն կենսագործունեության համատեքստում, և ըստ այդմ էլ առաջարկվում է նոր համընդգրկուն սահմանում (էջ 15-54):

Աշխատության **երկրորդ՝ «Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները և անջատողականության դեմ պայքարի Իսպանիայի քաղաքականությունը» գլխում** ատենախոսը վերլուծել է Իսպանիայի քաղաքական համակարգում Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները, անջատողականության դեմ պայքարի Իսպանիայի կիրառած գործիքակազմը, ինչպես նաև խաղերի տեսության շրջանակներում վերլուծել է Իսպանիայի կենտրոնական իշխանության և Կատալոնիայի ինքնավար համայնքի կիրառած ռազմավարությունները: Կատալոնիայի անջատողականության

առանձնահատկությունների ուսումնասիրումը որպես մասնավոր դեպքի վերլուծություն կարևորվում է, քանի որ եվրոպական անջատողական շարժումների մեծ մասն ունեն Կատալոնիայի անջատողականությանը բնորոշ սոցիալ-տնտեսական պատճառներ: Կատալոնիայի անջատողականության վերլուծությունը՝ որպես ոչ միայն եվրոպական տարածության, այլև աշխարհի ամենաակտիվ անջատողական շարժումներից մեկի կարևորվում է նաև անջատողականության դեմ պայքարի արդյունավետ և ոչ բռնի մեթոդների բացահայտման առումով (էջ 55-90):

Ատենախոսական աշխատանքի **երրորդ՝ «Եվրոպական միության ինտեգրային գործընթացների ազդեցությունը Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա» գլխում** ուսումնասիրված է Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության խնդիրները: Մասնավորապես՝ հետազոտությունում ինտեգրային գործընթացների և անջատողականության դրսևորումների ակտիվացման համատեքստում համակողմանի վերլուծվել է եվրոպական ազգ-պետությունների կերպափոխումները, ինչպես նաև ԵՄ-Իսպանիա-Կատալոնիայի ինքնավար համայնք ինստիտուցիոնալ փոխգործակցության խնդիրները: Աշխատության երրորդ գլխում ատենախոսն անդրադարձել է նաև ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի ինքնավար համայնքի ունեցած քաղաքական դերակատարությանը: Ըստ այդմ եզրակացրել է, որ ԵՄ-ի վերազգային ինստիտուտների և Կատալոնիայի շրջանային ինստիտուտների փոխգործակցության խորացումը ազդում է Իսպանիայի կենտրոնական իշխանության և Կատալոնիայի քաղաքական հարաբերությունների վատթարացման վրա (էջ 91-119):

Ատենախոսության **գիտական նորույթի** առումով կարելի է առանձնացնել որոշակի ձեռքբերումներ: Մասնավորապես, հիմնավորվել է անջատողականության հայեցակարգային նոր հիմքերի ներդրման անհրաժեշտությունը՝այն ներկայացնելով որպես քաղաքական գործընթաց, կազմվել է անջատողական շարժումների դասակարգման նոր մոդել, մշակվել է անջատողական հակամարտությունների և ներքաղաքական ճգնաժամերի վերլուծության նոր ռազմավարություն, բացահայտվել են անջատողականության դեմ պայքարի եղանակները և այլն:

Ատենախոսը տիրապետում և պահանջվող մակարդակով կիրառում է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական **մեթոդաբանություն**: Մասնավորապես, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության մեթոդները:

Ատենախոսության **շարադրման լեզուն** և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան խնդիրներ ձևակերպելու, դրանց համապատասխան մեթոդներ գործադրելու և համապատասխան եզրահանգումներ կատարելու՝ ատենախոսության մեջ դրսևորված մշակույթը վկայում է ատենախոսի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու՝ ձևավորված կարողությունների մասին:

Ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի **թերություններից**, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխի երեք ենթագլուխներում անդադառնալով անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությանը՝ ատենախոսն օգտագործում է զգալի քանակությամբ գրականություն (էջ 15-54), որոնք երբեմն խանգարում են ներկայացնել սեփական մոտեցումները: Դրանք, թերևս, կարելի էր ներկայացնել ավելի սեղմ և համառոտ ծավալով: Հղում անելով տարբեր մտածողների՝ հեղինակը համեմատաբար քիչ է ներկայացրել սեփական դատողություններն ու գնահատականները:
2. Ատենախոսը մեջբերելով տարբեր հեղինակների կողմից արված ուսումնասիրություններ, խորությամբ վերլուծում է անջատողականության մի քանի պատճառներ. քաղաքացիական, իրավունքների և քաղաքացիական ազատության սահմանափակում, բռնի կերպով միացում, ինքնապաշտպանություն ագրեսորից, կենտրոնական իշխանության նկատմամբ վստահության պակասը, տնտեսական շահագործումը, պատմական գործընթացները, մշակութային ինտեգրացիա և այլն (էջ 23-33): Այս ամենը չափազանց կարևոր է առավել լավ պատկերացնելու համար հետազոտության բուն էությունը: Սակայն, աշխատանքն էականորեն կշահեր

եթե հեղինակը հետազոտության վերլուծական մասում համեմատության ենթարկեր Արցախի և Կատալոնիայի օրինակները: Այս համատեքստում պետք է վեր հանել արցախյան հակամարտության պատմական և իրավաքաղաքական պատճառները և Կատալոնիայի օրինակի հետ համեմատելով հանգել համապատասխան եզրահանգումների:

3. Ատենախոսության մեջ հեղինակը անդրադարձել է Եվրոպական Միության անդամ պետություններում առկա անջատողական շարժումներին, ընդգծել վերջիններիս ուղղվածությունները, առաջացման պատճառները և այլն: Ցանկալի կլիներ, որ հեղինակը այս համատեքստում վերլուծության ենթարկեր Իտալիայի Ալտո Ադիջե նահանգի օրինակը ևս. դա մի անջատողական քաղաքական շարժում է, որը հավակնում է այս նահանգի ինքնորոշման, կամ վերամիավորվում Տիրոլի հետ Ավստրիայի կազմում: Եվ չնայած այս ամենին Իտալական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում Ալտո Ադիջեն մնում է իտալական՝ պահպանելով լեզվական, մշակութային, կրթական գրեթե բոլոր ավանդույթները: Սա մի լավագույն օրինակ է, որն առավել կարժևորեր կատարված ուսումնասիրությունը:

4. Աշխատանքի 3-րդ՝ «Եվրոպական միության ինտեգրային գործընթացների ազդեցությունը Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա» գլխում հեղինակը ինտեգրային գործընթացների և անջատողականության դրսևորումների ակտիվացման համատեքստում վերլուծել է եվրոպական ազգ-պետությունների կերպափոխումները, ինչպես նաև ԵՄ-Իսպանիա-Կատալոնիայի ինքնավար համայնք ինստիտուցիոնալ փոխգործակցության խնդիրները, սակայն կարծում ենք, որ աշխատանքի այս հատվածում գերակշռում են մի շարք հասկացությունների սահմանումները, եվրոպական ինտեգրացիոն տեսություններին ուղղված տեսական անդրադարձը, մինչդեռ ցանկալի էր տեսնել ավելի շատ այդ ինտոգրացիոն գործընթացների ունեցած ազդեցության հետևանքների, առաջացած խնդիրների հստակ և առավել մանրամասն գործնական վերլուծությունը:

5. Դրական ենք գնահատում հեղինակի կողմից մանրամասն եզրակացությունների ներկայացումը, սակայն, կարծում ենք, որ աշխատանքին կնպաստեր նաև առաջ քաշված մի շարք խնդիրների վերաբերյալ հստակ

առաջարկությունների ներկայացումը և հնարավորության դեպքում միջազգային փորձի ուսումնասիրության, ինչպես նաև սեփական դատողությունների և ուսումնասիրությունների արդյունքում դուրս բերված հստակ օրինակների ներկայացումը նշված առաջարկների կյանքի կոչման և հիմնախնդիրների լուծման համար:

Այնուամենայնիվ, նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի գիտական նշանակությունը: Ռաֆիկ Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով» վերտառությամբ ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ԻԳ.00.02 «քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս

ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետի հանրային կառավարման ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Է. Քալանթարյան

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Քալանթարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, բան. գիտ. թեկն., ասիստենտ Մերի Հովհաննիսյան

«25» **Օգոստոս 2022թ**